փախչէր, ի մէջ Ջրոյն կացեալ, հայր զհնարս խորհէր ազատելոյ զկին և զաւակ իւր և ոչ գտանէր. վաճառականք ողորմելիք տարակուսեալք ոչ գիտէին զինչ առնել, այսքան ապրանք, ուր կարէին փախուցանել. ոմանք ի հինգ տեղիս փախուցին զկահ կարասի իւրեանց, զկին և զորդի և անդ զկնի հասանէր Ջուրն. յամենայն աչս արտասուք և յամենայն բերանս ողբ. ոչ էր հնար բարեկամ ընդ բարեկամի խօսիլ, իսկոյն արտասուք յերկոցունց աչաց յորդէին, նմին իրի առ միմեանս կացեալ ոչ կարէին խօսիլ. եթէ ոք տեսանէր միայն զձառադիմութիւն դիմաց, զդեղնութիւն երեսաց, զցամաքութիւն և զչորութիւն շրթանց ամենայն մարդկանց իսկոյն անտի մակաբերէր զներքին աղէտս տարակուսութեան նոցա. ոմանք ի բաց թողեալ զտարակուսութիւնն, ծախէր բազում դրամս, բերել տայր հողս և զտամբն լնոյր, զի մի մտցէ Ջուրն ի ներքս, այլ Ջուրն ի յատակէ տանն ելանէր, և ընդ վայր լինէր աշխատանքն և ծախն. ապա զինչ արասցեն, ամենայն ոք կարօղն է գնեաց նաւս և նաւակս և բիօտայս, և ծածկեցին իբրև զպուռք կահեօք և կարասեօք և ընտանեօք մտին ի ներքս որպէս նոյ ի տապանն. բայց ուր կարէր գտանիլ այնքան նաւ, նաւակ, սալ, և բիօդայ բաւական ամենեցուն. հինգ ֆօրինդնոց բիօդան երեսուն և եօթն և քառասուն ֆօրինդով տային, միայն թէքնէն, և ոչ գտանիւր, ես բերել ետու յայլ ուստեքէ երեսուն և եօթն ֆօրինդով, և ծածուկովն ամենայն եղև ինձ եօթանասուն ֆօրինդ. լալով և վճարելով կրկնապատիկ հարիւրապատիկ խնդրէին մարդիք նաւակս և ոչ գտանէին. ապա զային արտասուաթոր աչօք աղաչէին զինքեանս, և կամ զմի սընտուկ ի նաւն առնուլ ևն.։ Արդ մինչև ցայս վայր եկեղեցին մեր բաց էր, և ժողովուրդն զայր նաւակաւ և փոքր մի մխիթարէին։ Ես սպասէի ֆօռէրին հրատարակել աղօթս պաղատանս առնել, իբրև տեսի, թէ ոչ առնէ, այլ ի յորդորելն ոմանց ասացեալ է, թէ Աստուած հրաշս ոչ առնէ, ես հրամայեցի իմոյ ժողովրդեան յամենայնում աւուր տեսանել զպատարագ, և յերեկոյին զայ ժողովիլ յեկեղեցին, և առաջի սրբութեան ասել զամենայն սրբոց զլիթանիան ձայնիւ և զայլ պաղատանս առնել. այլ քանզի եկեղեցին աղքատ է, ոչ կարէ աւուրս բազումս սրբութիւն դնել, զկնի միոյ շաբաթու հաստատեցի... շաբաթ մի ամբողջ պահս պահել. յաւուր տօնի մարմնոյ և արեան ի պահս էին ամենայն մեր ժողովուրդ, և կարծեմ թէ ոմանք նէմցէք ևս, և յետոյ ժողովրդօք խօսատացաք հետի երթալ յուխտ ի մարիաշնէ. և յայսմ շաբաթ աւուր եթէ կամք տեառն լին[ի]ցի, երթամք։ Եւ այս ամենայն վասն ազատելոյ զմեզ ի Ջրոյ, և ի հիւանդութենէ, որ զկնի ցամաքիլ Ջրոյն ի գարշահոտութենէ լինիլ կարէ պէսպէս հիւանդութիւնք, ի գետնաշարժութենէ, ի կայծակնէ և ի մրրկէ։ Նէմցէքն խուռն զային յեկեղեցին մեր. և այս ջերմեռանդութիւն մեծ չինութիւն եղև, և մեծ անուն հայոց ազգին։ Ֆօռէրն տակաւին ոչ զարթնոյր, լսէր զտրտունջս ժողովրդեան և անփոյթ լինէր. յետոյ ժողովեցան մաճիստռաթն, և հրամայեցին ի նախատինս նորա կարգել աղօթս և խնդրուածս. և նա ստիպեալ կատարեաց զխնդրուածս նոցա. և յետ նոցա ըռացքն ևս սկսան թափօր առնել. և հսկումն ի գիշերի, ևն.։ Արդ յև ևս աճիլ Ջրոյն մեք ևս ընդ հայր սիմոնին մտաք յայլոյ նաւս, զի մերն չև էր եզերեալ, և ապա ի մերն մտաք, և եկեղեցին փակեցաւ, և ոչ էր հնար պատարագել անդ վասն Ջրոյն, զի Ջուրն ի վեր քան զաստիճանս բեմից չորս մատ ի վեր էր։ Բարձաւ ատեան և դատաստան. արհեստաւորք լռեցին, դադարեցան վաճառք. բիացան սուգ զգեցաւ, և ոչ ոք էր որ գնէր, և ոչ որ վաճառէր. բարձաւ ուրախութիւն ի պանդոկաց հրամանաւ մաճիսթռաթին. ուր աստ կերակրոց խոկումն, կամ սեղանոց զարդարանք. ուր աստ ամօթ և պատկառանք կանանց և աղջկանց ի փողոցի մինչև ցստինս ի Ջուրն գալէին լալով։ Եւ կամ ուր տեսանիւր զարդարիլ կանանց ևս մեծամեծաց. ուր յզբօսանս երթալ, և ոչ մի ինչ յայսպիսեաց երևէր, այլ խաւար և մութն տրտմութեան և տարակուսանաց. բայց այսու ամենայնի տակաւին մի անցուկ ճանապարհ էր, ընդ որ ի քաղաքէն կարէր ելանել ոք. և բազումք ելին ի քաղաքէն ի լերինս և յանտառս, և անդ կամէին բնակիլ մինչև տեսցեն զկատարածն. և անդ ևս ոչ գտին հանգիստ, զի աւազակք յարեան, և թալանէին զնոսա. ապա փախեան ի բարձրաբերց քաղաքս, և մինչև ցայժմ անդ են և ոմանք դարձան։ Յետ այսորիկ փակեցաւ և այն անցք, ընդ որ անհնար էր ձիով կամ կառօք անցանել. և փակեցաւ քաղաքն շուրջ